

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, ա-վազանի անունով Ստեփան, ծնվել է 1925 թվականին Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում։ Շատ չանցած ծնողների հետ վերահաստատվում է Ալեքսանդրետի, երբեմնի Հայոց ծոցի, Սովուգ-սու գյուղում, ուր անցնում է փոքրիկն Ստեփանի մանկությունը։ Վաղ մանկական տարիքից նա զրկվում է ծնողական գուրգուրանքից և մնում է որբ, ճանաչելով որբության դառնությունները։ Փոքրիկն Ստեփանը իր բնածին քաղցր ձայնով իր շուրջ ստեղծում է համակրանք և շրջապատվում է ժողովրդի սիրով և պաշտպանությամբ։

1938-1939 թվականներին, երբ Ալեքսանդրետի շրջանը (այժմ Սանջակ) անջատվելով Սիրիայից հանձնվում է Թուրքիային, փոքրիկն Ստեփանը բազմահազար գաղթականների հետ գաղթում է Լիբանան՝ Բեյրութ, ուր նա շարունակում է իր կիսատ մնացած ուսումը Արգարյան վաժարանում։

1941 թվականին նա ընդունվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանում որպես ուսանող։

1945 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժինը, սարկավագ է ձեռնադրվում ձեռամբ Տ. Կյուրեղ պատրիարքի։

Մինչև 1947 թվականի օգոստոս ամիսը սովորում է Ընծայարանում և նույն տարին ներդաղթում է Հայրենիք և երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի օրով ընդունվում է Մայր Աթոռի միաբանության շարքում որպես սարկավագ։

1951 թվականին նա կուսակրոն քահանա է ձեռնադրվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում և իր գեղեցիկ ձայնի համար վերանվանվում Տ. Կոմիտաս աբեղա։

Ապա երիտասարդ հոգևորականի առաջ բացվում է վանական-վարչական գործունեության լայն ուղի։ Նա ձեռնհասորեն վարում է Ս. Գեղարդի վանքի վանահայրությունը։ 1952—1954 թվականներին պաշտոնավարում է Թբիլիսիում և Բաքվում որպես Հոգևոր հովիվ, արժանանալով ժողովրդի ջերմ սիրուն և վանական իշխանության գնահատանքին։

1954—1955 թվականներին պաշտոնավարում է Մայր Աթոռում որպես երաժշտության դասատու Հոգևոր Ճեմարանի և փոխ-լուսարարապետ Մայր Տաճարի։

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Հայրապետի ընտրությունից հետո նշանակվում է նաև գավազանակիր Վեհափառ Հայրապետի։

1956 թվականի հունվարից նշանակվում է պատմական Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ, ուր ծավալում է շատ բեղուն գործունեություն՝ կազմակերպելով թեմի ազգային-եկեղեցական կյանքը։

1957 թվականի մայիսից Վեհափառ Հայրապետը, գնահատելով Տ. Կոմիտաս վարդապետի ազգանվեր գործունեությունը, նրան նշանակում է վրահայոց թեմի առաջնորդ։

1957 թվականի նոյեմբերի 24-ին, վրահայոց թեմական խորհրդի միջնորդությամբ, ձեռնադրվում է եպիսկոպոս վրահայոց թեմի վրա։

Տ. Կոմիտաս սրբազանը մեր խոստումնալից և երիտասարդ հոգևորականներից է, որի առաջ բացվում է ազգային-եկեղեցական գործունեության ընդարձակ ասպարեզ։

Վստահ ենք, որ սրբազանը, իր բարեմուն բնավորությամբ և նվիրումով, կարդարացնի Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և իր հավատացյալ ժողովրդի սերը։